

ՎԱՐԱՄՈՒՆԻ

ԿԱՆԱԶ  
ՅԵՐԳԵՐ



ՊԵՏՂԱՏ

891.99

Կ-82

THE  
LIBRARY  
OF THE  
MUSEUM OF  
ART AND HISTORY  
NEW YORK

291-99

ՎԱՀԱՆ ԱՐԱՄՈՒՆԻ

01 JAN 2009

Ա-82

այր

19 NOV 2010

# ԿԱՆԱԶ ՅԵՐԳԵՐ

ԲԱՆԱՍԵՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1938

21620

21.02.2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ



1418  
38

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՐԵՆԻՔ ԻՄ ԼՈՒՍԵՂԵՆ

ԽՍՀՄ-ի Նոր Սահմանադրության առթիվ

Ա.

Հայրենիք իմ լուսեղեն  
Այս լեռգերս, վոր արդպես  
Աղբյուրի պես հեղեղվեց,  
Յերգերիս հետ կյանքս ել քեզ:  
Իմ հույզերի հուր լեզուն,  
Յեվ խոհերս հրեղեն,—  
Բոլորը քեզ սիրասուն,  
Հայրենիք իմ լուսեղեն:

Բ.

Յես իմ կյանքը կզինեմ  
Սվինով սուր ու զորեղ,  
Քո հանդիսաը, վոր հսկեմ—  
Հայրենիք իմ լուսեղեն:  
Ու թե՛ կրակ կգառնամ,  
Վոր թշնամուզ հրդեհեմ,  
Էդք քեզ համար ամբակամ,  
Հայրենիք իմ լուսեղեն:

Քո գավակն եմ լես հերոս /  
 Պայքարում այս հավիտյան,  
 Ուր յերգերիս նեաներով,  
 Ընդանում եմ դեպի կյանք:  
 Յեզ յերբ հնչի առաջին,  
 Համազարկը մարտերի,  
 Միշտ պատրաստ եմ լես կանչին—  
 Առաջնորդին պանծալի:

Կդարձնեմ յերգերս հորդ  
 Պողպատակուռ պատնեշներ,  
 Վոր պաշտպանեմ առաջնորդ,—  
 Ստալինին, վոր նշեց—  
 Նոր ճանապարհ վառ բերկրանք—  
 Քեզ հայրենիք լուսեղեն՝  
 Վոսկեծոռն մի նոր կյանք,—  
 Ժողովրդին փառահեղ:

Ստալինը կամքով հուր  
 Խնդութլուշով չի առ լի,  
 Հարթում է հար լայնահուն  
 Դալիքի պայծառ ուղին:  
 Իսկ տողերիս հեղեղն ել  
 Քշում է հինը անշուք,  
 Հայրենիք իմ լուսեղեն՝  
 Նորը լելնում է իշխում:

Իմ աչքերը լինեն թող  
 Հուսարձակներ վառ հատու,  
 Պատռեն ամոլեր, մութ ու քող  
 Հայրենիք իմ լուսատու:

1936 թ. ոգոստոս  
 Յերևան

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

Կրթության նախարարության  
 Կրթական գրադարանի  
 Կրթական գրադարանի  
 Կրթական գրադարանի  
 Կրթական գրադարանի

Կրթական գրադարանի  
 Կրթական գրադարանի  
 Կրթական գրադարանի  
 Կրթական գրադարանի  
 Կրթական գրադարանի

ՅԵՐԳ ԵՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒՓՅԱՆ.

1.

Ահա բացվում ե նորից  
Լուսապայծառ ցողաթուրմ,  
Առավոտն այս, արևի—  
Վաճանն առած իր ուսին,  
Ուր փողոցում ե չորս զին  
Յեղ յերգ, և՛ սեր, խնդու-թյուն,  
Գունազեղվում են ահա  
Սար ու յեթեր միասին:

2.

Գեղածիժաղ յերկրիս  
Հավակներն ենք մենք խնդուն,  
Վոր փողոցով քայլում ենք  
Սրտերով մեր արևավառ,  
Անընկճելի մեր կամքից  
Մայթն ու փողոցն ե թնդում,  
Յերբ անցնում ենք ջոկ առ ջոկ  
Շարքերով խիտ վոնց անառո:

3.

Լայն ե յերկիրը մեր այս  
Ու այնքան ջինջ, հարազատ,  
Ուր կան դաշտեր բերքաշատ  
Վեր խոյացող շենքեր շեն,  
Այս ամենի տերն ենք մենք  
Շունչ ենք քաշում մենք ազատ,  
Ստալինյան արևի—  
Կամարի տակ հոյաշեն:

4.

Մեր ամենքի սրտերում  
Կենսածիժաղ մի գարուն,  
Մկաններում մեր ջլուա  
Յեղնում ե ուժը յետում  
Քասակարգիս համար հաղթ—  
Յեղ մեր կամքում մաքառուն,  
Կյանքն ե շնչում որերի  
Վոսկե ոժուն ու խնդուն:

5.

Ձերմ ենք ինչպես արևը  
Մեր խինդն ասես լինի ծով,  
Յեղ մեր ուժն ե անցամաք  
Ինչպես կապույտ մեծ ովկյան,  
Կոմունիզմի վոսկեգույն  
Դուռն ենք, կուռմ վնդոցով,  
Մենք պայքար ենք, յերգ ու սեր,  
Յեղ լուսածիր պայծառ կյանք:

Խորհրդա ին իմ յերկիր  
 Դու մեր սրտին հարազատ,  
 Մեր յերկրումն ե միայն,  
 Վոր կլանքն ե դարձել ուրախ,  
 Կյանքն ե դարձել յերջանիկ—  
 Աշխատանքը սրբազան,  
 Մենք դարձել ենք ունեվոր  
 Ել չենք քաշում վնչ մի ախ:

7.

Այս ամենի համար մենք,  
 Պարտական ենք մենք նրան,  
 Առաջնորդին այն մեր մեծ՝  
 —Քեզ հարազատ Սաալին,  
 Վոր ավեցիր անսահման  
 Ազատութուն հուրհուրան,  
 Յեվ հիմա յեկ դու մեզ հայր—  
 Խինդ ու ծիծաղ ես տալիս:

1937 թ.

Յերևան

## ՅԵՐԳ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՄԱՍԻՆ

Ա.

Ի՞նչ ե արևը վերին, ի՞նչ ջերմութուն ունի նա,  
 Վոր շողում ե յերկնքի կապույտ ովկյանի վրա:  
 Ստալինն ե հուր արև, և արևն այդ հուրհրան,  
 Շողում ե վողջ աշխարհիս մարդկության սրտի վրա:  
 Ստալինը, արևն այդ կյանք ե տալիս բոլորին,  
 Ու սերմանում սերմերը լուսապայծառ վառ կյանքի:  
 Նա յե արևը մեր մեծ, առաջնորդը պանծալի,  
 Վոր սնում ե աճեցնում սերունդներին մեր անթիվ:

Բ.

Ստալինյան արևի ջերմ շողերը քնքշաբար,  
 Ջերմացնում են բոլորիս, դարձնում հզոր անյերեր:  
 Այդ արևով բարձրանում՝ գուրգուրվում են հայրաբար,  
 Խորհրդային մեր յերկրի թե մանուկը և թե ծեր:  
 Յեվ այդ հզոր արևին, հար հավիտյան յերկար կյանք,  
 Վոր գծում ե մեր ճամբան լուսապայծառ, ապահով:  
 Այդ արևն ե փայլում վառ հորիզոնում հավիտյան,  
 Յեվ տալիս լույս, տալիս կյանք—վողջ աշխարհին,—  
 մարդկության:

1937 թ.

Յերևան



Մ Ե Ծ Մ Ս Բ Դ Ը

(Ներքող ՍՏԱԼԻՆԻՆ)

1.

...Յեզվ այժմ յերբ յիս փողոց եմ յիկնում,  
Ու նայում հպարտ շենքերն իմ առջև  
Բարձրանում են վեր, մեր պողպատակամ,  
Ուժի և կամքի ծովում լիտատո:  
Ահա քարտաշը, վորը տուֆն և հզկում,  
Տուֆի վարդագուշն ժպիտում կարմիր,  
Մեծ Ստալինի հանճարն և փայլում  
Ու գծում ճամբան վեհ հաղթանակի:  
Իսկ վորմնադիրը, վոր քար և շարում,  
Ու լցնում ցեմենտ, վոր նրանք ամբանան,  
Հայր Ստալինի կամքն են կատարում,  
Յեռանդուն ու ջերմ սիրով անսահման:  
—Ահա քար ու ցեխ, գե շարիր վարպետ,  
Բյուր սրտերն են վառ բարախում, խնդում,  
Յերջանկության մեծ ճարտարագետ,  
Հայր Ստալինն և մեզ զեկավարում:  
Ամեն ճակատում մեծ մարդը կրկին,  
Քայլում և մեզ հետ, մեզ զեկավարում—

Ու բերում մեզ կյանք և սերեր անդին՝  
Սերմանում նորից համայն սրտերում:  
Ու այդպես փում ծիածանը վառ,  
Ազատության ջերմ հավատով լեցուն,  
Ինքն Ստալինը հաղթանակ և հաջ,  
Ողում, ցամաքում և թե հորդ ջրում:

2.

Նա, վոր կերտից մի բանակ, կամքով լեռնացող,  
Մեծ Լենինի հանճարով ու մարտնչող հար,  
Ստալինը, վոր դարձավ խնդության բյուր ցուք,  
Ու փրկության ջեռ արև ժողովրդի համար:  
Յեզվ այդ անունը ահա վորպես ծիածան,  
Յերջանկություն և բերում լույս ու այգեբաց,  
Յեզվ անունն այդ, վորպես վառվող լուսարձակ  
Վարում և մեր մտքտերը կրծքով լուսարաց:

3.

Ու բազմազգյա յերկիրն այս հաղթանակով լի հպարտ  
Անունն այդ դարձրած վորպես դրոշ ու պատգամ,  
Հաղթանակում և անկանգ ու ընթանում դեպի մարտ,  
Այդ անունով վոնց փարոս, վոր վառվում և միշտ  
անմար,  
Մարտիկները քո հերոս վորոնց հանիր դու վտաքի,  
Պայքարի վառ յերգերով դարձան տերը յերկրի,  
Ու բերեցին անսահման վառ խնդություն ու բերկրանք,  
Յեզվ սովեցին մեզ անմահ արևի պես վառվող կյանք:  
Ու հիմա յեղ հավիտյան հավատարիմ լինելով,  
Դու մեր նրև, դու մեր կյանք, կպաշտպանենք քեզ  
կրծքով:

Յեթի հարկը պահանջի մեր հարազատ Ստալին,  
Վերջին կողի կհանենք մեր ուժերին, բոլորին:  
Յեվ անունն այդ Ստալին, շողջողում ե վոսկեղոծ,  
Հաղթանակի վեհափառ ուղիների բոցերում,  
Յես ել անա անունն այդ, և թանկագին և հզոր,—  
Վորպես պետոտ կպահեմ սրտիս անունն խորքերում:

1937 թ.

Հոկտեմբերյան

## ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ

Ա.

Մեր յերկրի աղջիկները աճերով պարզ, սև խաղող,  
Աշխատանքից եք դառնում այնպես ուրախ ու խաղով:  
Խնդուեթյունն ե վողողել ձեր սրտերը շատ մաքուր,  
Փթթում եք դուք և աճում խորհրդային ջերմ ու հուր  
Արևի տակ այնքան պարզ, յերկնքի տակ այնքան բիլ  
Կառուցում եք ու թափում ջրախնքի արծաթ կաթիլ:  
Ու միաձույլ ձեր հողով և սրտերով ինչպես վարդ,  
Մնորինակ վերելքի դուք մասնիկներն եք արդար:

Բ.

Ահա Արուսն ու Նինան, պահակները մեծ բերքի,  
Վոսկեղոծ հասկն են հսկում վաստակն իրենց ջրախնքի  
Վերից Վերան ե իջնում պարաշուտով գեպի ցած  
Շքանշանը կրծքին ինքը խնդուեթյամբ արբած:  
Զույն ե կտափն ե հոսում մեքենայից ուժ առած—  
Կենան զգաստ ու արի դազպահներին թեվ տված,—  
Մարտնչում ե ու գործում ստեղծագործ իր մտքով,  
Ժպտում ե հար լուսերես լուսապայծառ իր հողով:



Հերոսներ են դառնում մեր աղջիկները լերկրիս  
 Ու նվաճում ամպերը խիզախությամբ քաջարի,  
 Մամլաքաթներ են դառնում, ձյունե բամբակ գաշ-  
 տերում,

Ու գաշտերի հերոսներ Դեմչենկոսներ են ծնվում:  
 Վորպես դարնան շառաչուն ջրերի պես վարարած  
 Նրանց ուժը յեղնում է հին սրերի զեմ-գիմաց,  
 Հինը դարձնում են փոշի, հաղթանակը կարտախ  
 Հաղթութուն է միշտ բերում առավոտից առավոտ:

Մեր աղջիկներն այսպես են, ջերմ են ինչպես արեը,  
 Պարզ են ինչպես ամառվա վառ աստղազարդ յերկինքը,  
 Նրանց հոգին մաքուր է, նրանց կամքը մաքառուն,—  
 Նրանց սիրտն է բարախում թեթև-թեթև ու առուզգ:  
 Իսկ յես զգում եմ, զգում եմ նրանց ընթացքն այս  
 վին,

Նրանց ընթացքի հետ ել իմ սիրաը վեր է թևել,  
 Ու մեր կյանքի լերջանիկ լիանչուն զիլ դարկին  
 Ուժս խառնում նրանց ուժին, աղջիկներին իմ  
 անդին:

1937 թ.  
 Յերևան

## Ո, ՎՈՍԿԵՄՍՁ ԻՄ ԱՇՈՒՆ

Ո, վոսկեմազ իմ աշուն, դու կապուտաչ իմ աղջիկ,  
 Լիությունն ես զոգոցել այգիներում՝ ամեն տեղ—  
 Պաղոզդ աչքով է անում աչիքներով իր վճիտ,  
 Վոսկեցու ու մեղրանուշ, վոդկույզներով քաղցրհուժեղ:  
 Մեղ պարզել ես բերքերիդ և մրգերիդ վառ սինին  
 Լեցուն բերքով քաղցրանյութ՝ խաղող, խնձոր քաղ-  
 ցրանուշ,

Հետո կաթով արծաթե և փրփրուն վառ գինին,  
 —Ի՞նչ առատ է սեղանդ՝ վոսկե աշուն իմ անուշ:  
 Աշուն վոսկե իմ աշուն, վոր բերքերով ես հզի,  
 Առատության քաղցր մայր դու փոռում ես խնդու-  
 թյուն,

Անա բաժակը լցրած համեղ գինով խաղողի,—  
 Մեր հոր կենացն ենք խմում,—Մտալինի՝ մեծ Մարզու:

1937 թ.  
 Յերևան

Մ Ա Ն Ո Ւ Կ Ն Ե Ր Ի Ն

Մանուկներ իմ լուսերես ու լույսի պես թանկագին,  
Մայիսաբույր ծաղկի պես դուք բացվում եք որ-որի՞

Աստղերի պես փայլում եք — վորթատունկի պես  
փթթում,  
Ու աճում եք թեվում վեր գուրգուրանքով մեծ մարդու:

Յեվ ձեր կյանքը վոնց աղբյուր կարկաչում ե ջինջ ու  
պարզ,  
Ու արևն ե հանբույրում ձեր շուրթերը այնքան խառ:

Խաղ եք անում դուք անահ ու ժպտում եք վոնց մալխ,  
Մրտերի մեջ այս կանանչ վազվզում եք ծափ տալիս:

Իմ յերկրի պես անամպ միշտ աճում եք անթախիծ  
Դուք լցվում եք խնդությամբ չունեք վնչ ցավ, վնչ  
կսկիծ:

1937 թ.  
Պերևան

Մ Ա Յ Ր Ը

Լարիկից

1.

Ինչպես արևն ե գետնից դեպ վեր  
Քաշում ծիլը մեր անգին հացի,  
Այդպես ել անա քնքուշ մի ձեռք —  
Քեզ ե գուրգուրում սիրուն Լարիկ:

2.

Ո՛, խայրտաշ տղա, ո՛, վոսկե ծիլ —  
Մեծացիր արագ և հասակ առ,  
Խորհրդային քաղցր կյանքը ծծիր  
Որերում մեր այս կ' ջերմ կ' վառ:

3.

Իսկ քո մայրն ո՛, անգին Մանեն —  
Կրճքի տակ պահած վառ մի գարուն,  
Սպասում ե նա դեռ անհամբեր,  
Գալիք փոքրիկ քաղաքացուն:

Այդ մայրը, մայրը, վորքան մաքուր,  
 Զգացմունքներով ե լցված դեպի,—  
 Մանուկներին այդ, վորոնք վաղը,  
 Անխոջ մարտիկներ դառնան պիտի:

1936 թ.

Արարամ

Հ Ո Ւ Ն Չ Ը

1.

Գիշերը դարեկեց վրանը կապույտ  
 Հասուն վոսկեվարս դաշտերի վրա,  
 Արթնացան քնից աստղերը պուտ-պուտ,  
 Կապույտ քաթանի վրանին թառած:  
 Յե՛վ արծաթագեղ լույսը լուսնյակի—  
 Լույս ծոպի՞ններով հոսեց լուսածիր,  
 Լուսից շողողաց մեր հայն անգին,—  
 Որորվեց ինչպես դեռահարսն հզր:

2.

Ալիքվեց արաը ու լուս խոնարհվեց  
 Լույսնի մահկի պես դերանդու ուժից,  
 Իսկ կոլխողնիկը ցորենը դիզեց,—  
 Յրելով մտքից մոմուս ու թախի՛ծ:  
 — Ու թող հասկերի ծիծաղն արծաթի  
 Զեք սիրտը հոսի լելնի ափից-ափ,—  
 Ո՞վ, քաջ հնձվորներ, վոր յելած հնձի,  
 Դիզում եք հասկը մինչև լուսաբաց,—

— Հնձեցեք հասկը, հնձեցեք արագ,—  
Այստեղ ել տանենք պայծառ հաղթանակ:

1934 թ.  
Հոկտեմբերյան

—

ՅԵՐԳ ԱՐԵՎԻ ՈՒ ԳՍՐՆՈՆ ՄԱՍԻՆ

Հողը բուրում է  
Սև հողը թաց,—  
Շիկնել է արևը  
Իր կրճքով բաց:

Բացվում է գարունը—  
Գարունը ուժի,  
Պետք է դաշտերում—  
Մեր ուժը խուժի:

Յերկաթե մի ձևը  
Կթերթի հողը—  
Արևը թափի թող—  
Իր լույսն ու շողը:

Արևի շողը—  
Կլերզի իր յերզը,  
Կխոստանա գարունը,  
Իր առատ բերքը:

Շառաչուն գարունը, —  
Կչերգի իր յերգը,  
Կքամենք հողից —  
Վրակեշող բերքը:

1935 թ.  
Հոկտեմբերյան

## ՊՈՒՇԿԻՆՅԱՆ ԳԻՇԵՐ

Ուշ է: Իսկ գիշերը հալվում է մոմի պես:  
Հողնած եմ: Ուղում եմ քիչ քնել ու հանգիստ —  
Տալ հողուն իմ պայծառ: Ուշ է: — Գիշեր է կես,  
Իսկ յես դեռ թերթում եմ, ինչքան ել վոր հողնի —  
Բարախուն վառ սիրտն իմ, պեսք եվոր կարգամ յես:  
Հազենամ գրքոյն այդ ու պատմությամբ անմար,  
Վոր ունեցել է մի սևադանգուր պոետ՝  
Պարզության գազաթն այդ, ու բարձրունքն ալդ հար:  
Ահա և Լիցեյն: Այստեղ այս ամայի  
Պատերի մեջ է նա՝ իր որերից մաշել:  
Սովորել է նա այստեղ: Ու սրտոյն իր համակ  
Ըմբոստության փառքի սուր սվինը սրել:  
Այսպես, ըմբոստության աղատության սիրով,  
Նա ջեռ յերգեր կոփեց, և հենց այդ ամայի  
Լիցեյի մութ խոնավ պատերի մեջ անգիր  
Սովորեց նա ատել թագավորին, թագին:  
Հենց այս տողերի մեջ, նա, պոետն է քայլում,  
Ահա դեմս յելավ: Ու խոսում է ինձ հետ,  
— Վողջուչն, հիվ պատանի, գիշեր է: — Դեռ կարգում  
Ու թերթում ես յերգերն իմ հատու: Ուր վորպես նետ:





Իր թևերն եր տարածել խավարը մութ ու անձև,  
Հենց այդ պահին դադարեց կռիվն անեղ լեռներում:

Իսկ լեռների գրկի մեջ մի քարաշեն խրճիթում,  
Վաշտապետը հավաքած մարտիկներին քաջարի,  
Փռած քարտեղն առաջին լուռ նայում է ու գծում,  
Նոր ճամբարներ բաց անում՝ դեպի Թափան անտառիկ:

— Մեզ արված է մի խնդիր, ինչ գնով ել վոր լինի  
Պետք է քշենք թշնամուն ու հեռ մղենք կամուրջից,  
Պետք է ճակատը պատռենք ու մոտենանք

Կորթնանին:

Սպասում են մեզ այնտեղ ապտամբված գյուղացին:

— Հարկավոր է շարժվել կամուրջն անել անմխաս  
Ու հարվածել թշնամուն, խփել նրան թիկունքից,  
Պետք է թափուն թշնամուն համառությամբ

դիմանանք:

Իսկ այս ճամբով մենք կանցնենք դեպի առաջ

կամուրջից:

— Այս ուղղությամբ մենք կանենք կարաուլս սև

թափան

Ուր ամբողջված է հիմա դաշնակցական մի բանդա, —

Վաշտապետն ասում է գծում ուղին հարձակման,

Ձեռքի մատիտն եր հարդում դեպի լեռ տանող

ճամբան:

— Հարկավոր է իմանալ դիրքն ու ուժը թշնամու,

Ջոկատը մեր հեռախուռյղ մենք հենց հիմա

կուղարկենք:

Մենք կփռենք նրանց դին լուսարացի թեժ կավում,  
Ու կարաուլ-Թավայի սեզ կատարը մենք կանենք:

\* \* \*

Նստած ձիեր փրփրաբաշ յերեք մարտիկ քաջարի,  
Սամումի ու հողմի պես ուժգնորեն սլացան,  
Խավարի մեջ ձիերը գնդակների պես արի,  
Անտառներով, լեռներով, դեպի կամուրջն անցան:

Նրանք ծանոթ են տեղին վառ մանկության որերից,  
Նրանք շատ են վազվղել ու խաղացել անտառում,  
Նրանք ծանոթ են ամեն, ամեն թփին ու քարին,  
Հենց այդ ծանոթ վայրերից դեպի կամուրջն են  
թռչում:

Մլանում են ու թռչում մերթ ուղիներ փոխելով,  
Վոր թշնամու չար աչքը չնկատի վրիպի,  
Ու առաջ են ընթանում ոճապտույտ ուղիով  
Հեռաներից թողնելով բարակ փոշին ամպերի:

Փրփրեցին ձիերը ու քամու պես սլացան  
Ահա հասան ձորի մոտ, նրանք իջան ձիուց վար,  
Ու ձիերը կապելով՝ իրենք իջան դեպի ցած,  
Դեպի ձորը խորախոր ու կամուրջին մոտեցան:

— Ձգուշությամբ սողացեք, մեկը առվից թող անցնի,  
Իսկ յես կանցնեմ կամուրջից փորսող տալով կգնամ,  
Մենք աջ կողմում կամուրջի իրարու կհանդիպենք,  
Ճերմակամազ ձերունին շնջում եր աննկատ:

Մարտիկները ջոկատի ղինվորներն այդ հասարակ,  
Չորքթաթ սողալով լուռ մոտեցան կամուրջին,

Պահակները քնած են, լուսթյունն է տիրել քար-  
Հետախուզիչները մեր քաջ մոտեցան մի տնակի:

Կամուրջի աջ թևի տակ մի փայտաշեն տնակում,  
Ուր շտաբն էր թշնամու դաշնակցական բանդայի,  
Գեներալն ու սպան փոփած ջարտեղն են դիտում  
Ու դավերի համար մուտք՝ վորոշում են նոր ուղի:

— Հարկավոր է ջախջախել կարմիրների բանակին,  
Ու չթողնել կամուրջը վոր ձեռքերից մեր գնա,  
Կարաուլի դիմացից մենք կբանանք հորդ կրակ,—  
Սպալի հետ խոսում էր գեներալն շտաբի:

Իսկ ձյունամազ Ներսեսը, Արմենի հետ միասին,  
Պատուհանի տակ չոքած այդ նենդ վճիռն են լսում,  
Գեներալն խփելով իր սպայի աջ ուսին,  
Ծիծաղում էր սրտադոճ Վարմիրներին կճգմենք:

— Յիթե զորքերը մեր քաջ, բռնեն ուղին նահանջի,—  
Պատասխանում է սպան գեներալի ծիծաղին,  
— Կնչ մի փախուստ, ի՞նչ նահանջ...  
Իսկ հակառակ դեպքումն էլ կամուրջը կպայթեցվի:

Գեներալն մռայլվեց կարկտաբեր ամպի պես,  
Նրա միտքը պզտորեց սպան տված իր հարցով,  
Գեներալն մոտեցավ պատուհանին, լրջատես,  
Ու այնտեղից հեռացավ, պլանն այնտեղ թողնելով:

\* \*

Չնկատեց թշնամին, ինչ վոր մի ձեռք բարձրացավ,  
Սավերի պես մոտեցավ պատուհանի փեղկերին,

Ինչ վոր մի բան վերցրած, ձեռքը արագ դուրս  
թռավ,  
Մթուփյունն էլ այդ պահին ուրախությամբ լույս  
տվեց:

Հետախուզիչները կարմիր, վոր քիչ յերկյուղով  
Լսում էին սպային գեներալի հետ մեկտեղ,  
Ծրագրերը թշնամու պատուհանից կորզելով,  
Նրանք իջան կամուրջից դեպի ձորն այն անդ:

\* \*

— Ձգուշությամբ սողացեք, չնկատեն հանկարծ մեզ,—  
Շշնջում էր ձերուսին փորսոդ տալով իջնում ցած,  
Նրանք դառնում էին յետ, ահա կամուրջն անցան  
Ու մոտեցան ձիերին՝ անդեղախոր ձորի մեջ:

\* \*

— Այս ուղիով պետք է մենք կարաուլից հարձակվենք,  
Ու ամբանանք կորթ գլուղում,— գեներալն մրմռաց,  
Պատուհանին մոտեցավ, վոր պլանը վերցրեր...  
— Իմ պլանը ի՞նչ լեղավ,— գեներալը մոնչաց:

Մեկ ձայն, մեկ սջ շուռ գալով հայհոյում էր,  
վորոնում  
Իր պլանը հարձակման, վոր չքացել էր արդեն.  
— Ո՞ւր է պլանս, Մկն,— շուռ էր գալիս ու փնտոում,  
— Միթե քամին թոցրեց, պատուհանից ընկավ վայր:

Յեվ գազազած գայլի պես գեներալն էր փրփրել,  
Հայհոյում էր զորքերին, իր սպային շլացած,

Վոր նա հայացքն իր բուժ դեպի գետինն եր հառել,  
Ու լսում եր հնազանդ տիրոջն իր շվարած:

\* \*

Անա ձիերը նստած՝ վոնց թեալոր թռչուններ,  
Կտրիճները մեր խիզախ գնում եյին դեպի յետ,  
Ու քամու պես սրընթաց այնքան արագ են թռչում,  
Մթուփյան մեջ սլանում, վոնց աղեղից պոկված նետ:

Ու սլացող ձիերի քրտնաշաղախ բաշերից  
Գորշընն եր բարձրանում, ինչպես ծուխը յերթիկի,  
Իրենց հետևում թողած արահետները փռու,  
Կտրիճներն են սլանում՝ ամուր կպած թամբերին:

\* \*

Դաշնակցական մի շոկատ ահա ձորից դուրս յեկավ:  
Նշմարվեցին սավերներ, վոր նետի պես սրընթաց,  
Ոձապտույտ գործելով սլանում եյին անտառ,—  
Հենց այդ պահին գնդակն նրանց հետևից վորոտաց:

Գնդակն առավ Ազատին ու ձիուց վար գլորեց,  
Ձին ծառս յեղավ՝ ընկավ վար՝ այդ թեալոր թռչող  
ձին,

Իսկ ընկնողը մեղձորեն իր գլուխն որորեց,  
—Յես ընկա վայր, մեռնում եմ, դուք թե առեք ու  
թռեք:

Ընկերները հետախույզ թռչում եյին քար ու թուփ,  
Միշտ հետ նայում կարոտով՝ ընկերոջն հիշելով,  
Մոտենո մ եյին արդեն նրանք իրենց զիրքերին,  
Թռչում, արագ սլանում, միշտ Ազատին հիշելով:

Հասան նրանք նորից վաշտ, իսկ ձիերը փրփրած  
Փնչում եյին կատաղի գետերի պես մոլեգնած,  
Նրանք իջան ձիերից, վաշտապետին մոտեցան,  
Ճակատներից քրտինքը ծորում եր վար, դեպի ցած:

—Անա դարձանք, յեկանք մենք, սակայն Ազատն  
ընկավ,

Վերադարձին ընկավ նա մի թեժացած գնդակով,—  
Հեկհեկալով պատմում եր հետախույզը այդ անտհ,  
Վոր քիչ առաջ թռչում եր վոնց թռչունը թեվալոր:

Ու իր ծոցից հանելով ձերմակամաղ ձերունին  
Դաշնակցական զորքերի ծրագիրը հարձակման,  
—Պատուհանից գողացանք—ու նա հանձնեց Արսենին,  
Սրբելով իր քրտինքը, գեկուցում է ձերունին:

Արսենի ղեմքը փայլեց, սիրտը լցվեց խնդուլթյամբ,  
—Պատիվ նրան, վոր ընկավ, իսկ ձեզ վողջուհն, քան  
աղերք,

Վաշտապետը համբուրեց Ներսես բիճին, Արմենին,  
—Ապրեք աղերք, կամուրջը գրավեցինք անմխաս:

—Դաշնակցական այդ բանդան վազն առավոտ  
լուսարաց

Պետք է անցնի հարձակման, կրակի տակ առնի մեզ,  
Խփելու լեն նրանք մեզ կարաուլի դիմացից,  
Ու պայթեցնեն կամուրջը, յերբ վար դիմեն նահանջի:

Ձեկուցում եր Ներսեսը, քափ քրտինքի մեջ կորած,  
Ու քրտինքը թափվում եր առչուձարաշ ձակատից,

Դեմքը փայլում էր մաքուր, ինչպես պայծառ

լուսաբաց,

Ճերմակամազ ձերուներն դարձել էր վառ պատանի:

Ու պատմում էր Ներսեսը, այդ ծերուներն քաջասիրտ,  
Պատմում բոլորն այն, ինչ իր ականջովն էր լսել,  
Իսկ վաշտապետն արի լուռ լսում էր ամբասիր,  
Ու հաղթութեան կարօտը սրտում նոր թև էր առել:

\* \*

— Յե՛վ կամուրջն այդ անփնաս հարկավոր է գրավել  
Ու շարժվել այս գծով կարաուլա սև Թափան,  
Հիմա այնտեղ թշնամին բռն է գրել, ծվարել,  
Պետք է խեղդել բնի մեջ գաշնակցական այգ  
բանդան:

Ու վաշտապետ Արսենը մարտիկներին իր անահ  
Նորից իր շուրջն հավաքեց կարիճներին քաջարի,  
— Իրությունը շատ լուրջ է—խոսքն ուղղեց Ավագին,  
Պետք է դասակղ առնես ու շարժվես դու առաջ:

— Նենդ թշնամին բլրից, առած մի մեծ գումարտակ,  
Լուսաբացը յերբ գծվի պետք է դիմի հարձակման,  
Սև թշնամին ուզում է առնել մեզ կրակի տակ,  
Իսկ յերբ դիմի նահանջի, պիտ կամուրջը պայթեցնի:

— Մինչ լուսաբաց, դու Ավագ, պետք է առաջ շարժվես,  
Ու կամուրջը դու պետք է, պիտ գրավես անփնաս,  
Իսկ դու Գեղամ, Թափի տակ թշնամուն կղիմադրես,  
Մինչ Ավագը կամուրջից քեզ կհասնի ոգնութեան:

\*\*\*

Իսկ այդ պահին շտաբում գեներալն էր հայտնյում,  
Կատաղել էր, փրփրել արյունարբու գայլի պես,  
— Նրանք տարան պլանը, հարկավոր է նոր գծում,  
Հարկավոր է պատրաստվել, ուշ է արդեն, գիշերը կես:

— Մեկին խփին գլորվեց, սակայն իրեն չգտան,  
— Ձին էր միայն վրնջում, փորում հողը վոտքերով,  
— Մատանաներ դուք կարմիր, դուք իմ պլանը տարաք,  
Գեներալն էր հայտնյում, անակի մեջ շրջելով:

2.

Կես էր դառել գիշերը, ճամբա ընկան յերբ նրանք,  
Ուղղությունը վերցնելով կարաուլա-սև Թափան  
Թնդում էյին լեռները նրանց հուժկու քայլի տակ,  
Քաջ Գեղամի դասակն ընթանում էր հաղթական:

Ու մոխրագուլն գայլի պես գիշերն անտառ է  
փախչում,  
Իր հետեից թողնելով աղջամուղջի ծվեններ,  
Իսկ դասակը Գեղամի, վոր Թափի տակ էր հասել,  
Լուսաբացի բացվելուն սպասում էր անհամբեր:

\* \*

Գնդացրորդ Ավագը դիրք էր բռնել ձորի մեջ,  
Շրջապատել կամուրջը և սպասում հարձակման,  
Պահակները թշնամու ընկել էյին քնի մեջ,  
Չորս կողմը լուռ էր կրկին ու բնությունն էր ամա:

Լուսաբացը գծվում էր, իսկ հորիզոնի վրա  
Արեգակը գլխատված կարմիրի մեջ էր լողում,

Յերբ արեւ բարձրանա վառ նիզակներով իրա,  
Համազարկը կպայթեր անդնդախոր այդ ձորում:

\* \*

Սաստկանում եր կռիվը ու դառնում եր ամենի,  
Բարկ կրակը տեղում եր քաջ մարտիկների վրա,  
Թնդանոթները կրկին կրակ ու բոց են թքում,  
Ու թափում են կոկորդից և՛ թե արձիճ, և՛ կրակ:

Իսկ դասակն Ավագի կրակում եր, հարձակվում,  
Շարժվում միշտ դեպի վեր, տարափի տակ գնդակի,  
Թնդանոթն ամպի պես անձրև կրակ եր մազում,  
Իսկ դասակը քաջարի դիրքից դիրք եր նվաճում:

Թեժանում եր կռիվը գնդակների ձայնի տակ,  
Թնդում էյին լեռները ու տնքում են, «ախ» քաշում,  
Իսկ կամուրջի վրայից թափվում եր դեռ հորդ կրակ,  
Դաշնակցական զորքերը կրակում են համառում:

\* \*

Սաստկացել եր կռիվն ու դարձել եր ամենի,  
Գնդացիքը հնձում եր դաշնակցական բանդային,  
Կարծես կրակ են դարձել մարտիկները քաջարի,  
Դաշնակցական զորքերը ընկնում են հար վիրավոր:

Ու ջոկատն Արմենի ձախ կողմն անցած թշնամու,  
Իսկ աջ կողմից խփում եր քաջ դասակն Ավագի,  
Յեվ զորքերը մեր կարմիր ողակել են թշնամուն,  
Խուճապի յեն մատնվել դաշնակ զորքերը կրկին:

Դաշնակցական զորքերը զլորվում են անհամար,  
Խելակորույս փախչում են՝ թողած խրամ ու դիրքեր,

Մարտիկները քաջարի, կարմիր զորքերն անաս,  
Միշտ առաջ են ընթանում ու առնում են նոր դիրքեր:

Նոսրանում են շարքերը դաշնակցական բանդայի,  
Ու փախչում են ձորն ի վայր, թողնում դերի,  
Թնդանոթ,  
Թողած կամուրջը՝ նրանք յեռ են փախչում դիրքերից  
Ու ամպերի հոտի պես հալածվում են սաբից-սար:

Կարմիր զորքերն առան կամուրջը այդ անջլաս:  
Ու փոզփոզաց արնագույն կարմիր դրոշն այնտեղ,  
Յեվ հաղթանակի լուրը կայծակի պես տարածվեց:  
— Դաշնակցական զորքերը շախջախվեցին խելահեղ:

3.

Հենց այդ պահին Թափի տակ թնդանոթներ  
կատարում,

Իսկ թշնամին աննահանջ կրակում եր դեռ ելի,  
Մարտիկները Գեղամի շիմադրում են նորից  
Ու ոգնության սպասում քաջ դասակին Ավագի:

Արևի թուրը վոսկե որն եր արել ուղիղ կես,  
Գնդակը դեռ տեղում եր կարաուլի սև դոշին —  
Կարմիր զորքերն արի կրակ են դարձել ասես,  
Գնդացիքի զարկերից ամպ ե կապում շեկ փոշին:

— Իսկ ինչո՞ւ յե ուշանում քաջ դասակն Ավագի,  
Չե՞ վոր նրանք կամուրջն անջլաս են գրավել —  
Կրակում են աղերքը զիմադրում են արի  
Ու սպասում անհամբեր, սպասում են Ավագին:

\* \*

Կես գիշեր եր, յերկնքում ամպը զարկել եր վրան,  
Շամպա ընկավ Ավագի քաջ դասակը համարձակ,  
Դեպի թափան Կարաուլ, ուր թշնամին եր նստած:  
Մարտիկները քաջարի գնում եյին հարձակման:

Լուսաբացն եր մոտենում. կարմիր գործերն արդեն  
Պատրաստ եյին դուրս գալու թշնամու հետ դեմ առ  
դեմ,  
Դաշնակցական բանդային, վոր դուրս քշեն թափայլից,  
Լուսաբացն եր մոտենում, այգը դժվում եր արդեն:

\* \*

Ու չերբ արևը ցրեց ասեղներն իր վոսկի,  
Սկսվել եր կռիվը ու դարձել եր կատաղի,—  
Դաշնակցական գործերը ընկնում եյին գնդակից,  
Քանի գնում կռիվը սաստկանում եր ավելի:

Դաշնակցական գործերը գլորվում են, ու ահա  
Նուճապի յեն մատնվել դաշնակցական գործերը,  
Կարմիր բանակը յելած վրոհում եր միշտ անահ,  
Փոռում գիծերը նրանց ու նվաճում դիրք առ դիրք:

Ու փախչում են գործերը դաշնակցական բանդայի,  
Նահանջում են դեպի յետ, արյունոտված, ահաբեկ,  
Յեվ թողնում են դիրքերը ու փախչում են թափայլից,  
Փախչում անտառը դեպի, վոհմակներ յես գալի:

4.

Կարմիր գործերը արի՛ լեռան կատարն առան  
Ու զարկեցին գազաթին ալ վառվոռն մի դրոշ,

Փողփողում ե դրոշը հաղթանակի ու վառման:  
— Կարաուլա թափայում հաղթանակը շողշողաց:

\* \*

Յերբ անցնում եմ դաշտերով, անտառներով այս խշշուն  
Ու հասնում եմ Կարաուլ-թափայի ժեռ կատարին,  
Կամուրջին ու թափային՝ նրանց առումն եմ հիշում—  
Ու կռիվն կատաղի սե թափայում անառիկ:

սեպտեմբեր 1937 թ.  
Յերևան

ՅԵՍ ՊԱՇՏՊՈՆԵՑԻ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Նվիրում եմ ժամանակիս սահմանարժի՝ քնկ. Ի. Տ. ՏՐՈՒՆՈՎԻՆ

1.

Չորս կողմը գիշեր, չորս կողմն անտառ,  
Յերկինքը ամպոտ, անասող, անլուսին,—  
Սահմանն եր հսկում կարոտով անտաղ  
Մի սահմանապահ, հրացանն ուսին:

Անտառից այն կողմ գետն եր դազազած,  
Գերում փեերն իր միալար հանգով,  
Նուլ ալիքներն ել փից բարձրացան,  
Կարծես պարում են մի նոր յեռանդով:

Ծավալվում եր գեռ մուլթն անթափանց  
Յեզ կարծես հյուսում դավերն իր մուլթ,  
Յերկինքն ել վերից աչքերից սառած՝  
Ուզում եր թափել արտասուքն անզուլթ:

Քամին ել կարծես շուռկ եր բերում,  
Վոր գետի միջից, մուլթ ու նենդավոր—  
Թշնամին արդեն սահմանն եր անցնում  
Այս մուլթ ամպամած ծանր գիշերով:

Սահմանապահը ձեռքն հրացանին  
Շրջում եր նորից, հսկում եր արթուն  
Սահմանը կարմիր, վոր չար թշնամին  
Չուղարկի մեզ մոտ լրտեսն՝ իր մարդուն:

2.

Արի զինվորն եր նայում խավարին,  
Անձրեն ել վերից մտրակում եր հար,  
Վերցնում ե նա քաշում ե գլխին  
Բրեկենտից կարված հագուստը հարմար:

Վերը, յերկնքում կայծակը փայլեց  
Ու թափեց հրե կրակն անձրե,  
Քամին անտառում շրջել սկսեց,  
Գիշերում այս սև—խավարում անձե:

Նա ել չեք լսում շուռկները նենգ,  
Հագուստն եր ծածկել ահանջ ու յերես,  
Միայն աչքերն են վորպես հատու նեռ  
Սահմանն ե կիսում փայլով սրատես:

Կարծես մոտիկից կանչում եր նրան  
Մի ձայն հարազատ, այնքան մտերիմ,  
—Ե՛, հե՛, քանջ զինվոր, սահմանի վրա  
Արժիվի նման յեղիք սրատես:

Դա հայրենիքի ձայնն եր հարազատ,  
Սերը սրբազան մեր հայրենիքի,—  
Սահմանապահին տալիս կամք անպարտ,  
Հսկի սահմանը սուրբ ու թանդազին:

Արծաթ անձրևը դեռ շափշափում էր,  
Յերբ քամին նորից անտառը շրջեց,  
Իսկ անձրևը հորդ դեռ մտրակում էր,  
Մարմինը նրա՝ անձրևը թրջեց:

Լսում եմ լսում և՛ շշուկ, և՛ ձայն,  
Վոր բերում է դեռ քամին խելագար,  
Ասաց, — և հենց իր աչքովն հրացալս  
Խավարը կիսեց, վոր իջել էր վար:

— Խանգարում են տես ծառերը խշշուն,  
Վոր քամու հետ միշտ վեճի յեն մտնում,  
Հետո լսում ե կարծես մի շշուկ —  
Լսողու թշուհն է այն կողմը սրում:

## 4.

Նորից ամպերը տաքնապախոով  
Մարտի մեջ մտան յերկնքի ծոցում,  
Իսկ կայծակը հուր անեղ մտրակով  
Խավարը կիսեց, փռեց լուսի ծով:

Յե՛վ հենց այդ պահին նշմարվեց կարծես՝  
Գետից դուրս յեկան մի քանի սովեր,  
Փրփուրի նման հալվեցին անձե՛ն  
Այն տերևախիտ անտառում անեղ:

Վառեց աչքերը վորպես լուսարձակ  
Սահմանապահը՝ քաջ մարտիկն արի,

Ու նրանց հեռքից նա առաջ անցավ,  
Թագնվելով մերթ հետևում ծառի:

Լրտեսներն անա ոճերի նման  
Սողում են դեպի խորքն անտառի,  
Սահմանապահը, վորսորդ աննման  
Հետևում էր միշտ անվախ ու արի:

Ոձ լրտեսները կանաչ թփերում  
Ծվարեցին վոնց թուխսն իր ճտերով,  
Ինչ վոր կապոցներ պահեցին թփում,  
Իսկ մեկն էլ սողաց գետի յեղերքով:

## 5.

Սահմանապահը՝ կոլջան այդ անահ,  
Տեսնում էր նրանց իր աչքերով սուր,  
— Ի՞նչ անեմ արդյոք յես, կրակ քանամ, —  
Այս միտքը փայլեց վոնց արծաթե սուր:

Ու նորից կայծակ ու նորից անձրև,  
Ծառերի խշշուն, գետն էլ դադաղած,  
Թափալազլոր ալիքով անձե՛ն  
Ափերն են քերում այնքան մոլեգնաց:

— Արդյոք կարո՞ղ եմ կենդանի բռնել,  
Մտածում է նա, դինվորն այդ քաջ, —  
— Ինչպես էլ լինի պետք է ղեմադրել, —  
Ասաց և սողաց նա դեպի առաջ:

— Կրակ կբանամ, ի՞նչ կուզի լինի  
Ու կխնայեմ իմ փամփուռներին,



Յե՛վ նա քարերից թագստոց շինեց  
Ու պառկեց այնտեղ՝ հրացանը ձեռքին:

—Նրանք վոտք գրին մեր հողի վրա.  
Կվոչնչացնեմ ինչ կուզե լինի.  
Ու նշան բռնեց թփերի վրա,  
—Չդավաճանես, մտերիմ շնիկ:

6.

—Ե, մ՛վ ես, ի՛նչ մարդ, դուրս յեկ թփերից, —  
Ասաց անվարան, հրացանն արձակեց,  
Ու փոխեց իսկուշյն տեղը կրակի,  
Յերբ յերկնքում մութ կաշձակը շաչեց:

Պատասխան չկար, նա դարան մտած  
Գնդակ արձակեց նորից ու նորից,  
Յե՛վ տեսավ ինչպես հրացանն ուսած,  
Բանդիտը յելավ թփերի տակից:

—Դու ի՞նչ ես վոր կաս, մեր ես ինձ դալիս, —  
Ասաց ու մեխեց գնդակը կրծքին.  
Բանդիտը լրտես զարկվեց քարին,  
Մյուսն ել հեռը՝ հրացանը ձեռքին:

—Չդավաճանես, ընկեր հրացան,  
Հարկավոր ե քիչ փամփուշտ խնայել,  
Հարկավոր ե դեռ սահմանն անցած  
Այդ լրտեսներին լուրջ դիմադրել:

Յե՛վ չնայած վոր կաշձակ եր, անձրե,  
Կոլյան, մարտիկն այդ՝ յերկու բանդիտի

Գլուրեց գետին խավարում անձե,  
Նա փոեց հողին թշնամու չար դին:

7.

Իսկ վաշտում արդեն տագնապը լավեց.  
Ալեքսինն առած իր ջոկն ալի՝  
Մլացավ առաջ, մտրակը շարժեց,  
Յերբ ջոկը մտավ խորքն անտառի:

Իսկ Կոլյան, Կոլյան լրտեսները դե՛մ  
Մարտի յեր մտել, գլուրեց չորսին,  
Իսկ ջոկը կարմիր վորպես հատու նե՛տ՝  
Քավարն եր կիսում, կծկում արահետ:

Յե՛վ սրտում պահած վառ հաղթանակի  
Հավատը մաքուր՝ չեր նահանջում չետ,  
Ահա գնդակը, վոր շաչեց ուժգին,  
Թշնամու սրտում մեխվեց ինչպես նե՛տ:

—Ալեքսին կզ՛մ տեսնես ոգնության,  
Փամփուշտ քիչ մնաց, կպրծնի հիմի, —  
Շշնջում եր նա, կամքով յերկաթյա  
Ու դիմադրում անվախ, անահի:

—Չիեր են դոփում, դալիս են կարծես.  
Մերձեք են արդյոք, թե՛ նենդ թշնամին,  
Բայց չեմ նահանջի՝ բաց կանեմ կուրծքս,  
Թեկուզ ե լինեն նրանք թշնամի:

8.

Ոգնության հասան նրանք Կոլյային  
Իրենց ջոկատի մարտիկները քաջ,

Շրջապատեցին կանաչ թփերին,  
Ուր թշնամին եր այնտեղ ծվարած:

Սկսվեց մարտը այնքան կատաղի,  
Իսկ թշնամին բիրտ մի բուռ մարտիկով  
Կրակում եր ու փոխվում տեղից  
Դեպի դեռ տանող նեղ արահետով:

Յեվ Կոլյան, հետո Ալեքսինն արի,  
Ինչպես գնդակները նետվեցին առաջ,  
Շրջապատեցին ամեն թումբ ու ծառ  
Յեվ ճամբաները նրանց նահանջի:

— Կանգ առեք այստեղ, ո՞վ եք և ի՞նչ մարդ,—  
Մրրկեց ուժգին ձայնն Ալեքսինի,—  
Ողակեց նրանց ջոկատը արթուն  
Այդ բանդիտներին և՛ նենգ, և՛ զազիր:

Ու լրտեսներին բռնեցին նրանք,  
Ութին վիրավոր, տասին կենդանի,  
Իսկ լուսարացը գծվում եր հրակ,  
Յերբ նրանք տարան այդ լրտեսներին:

9.

Իբ հերոսական զործերի համար,  
Այդ մարտիկները վաշտապետը քաջ  
Պարզեատրեց խիզախ Կոլյային  
Քաջ հերոսները վողջ վաշտի առաջ:

Վոսկե ժամացույց տվեցին նրան՝  
Սահմանադրահին անվախ ու պարթև,  
Իսկ Կոլյան, Կոլյան սրտով հուրհրան  
Իր խոսքն ասաց վողջ վաշտի առաջ:

— Յես պարտական եմ մեծ Ստալինին,  
Առաջնորդին մեր մեծ հայրենիքի,  
Նրան, վոր խնդուն վառ կյանքն է սալիս,  
Յես պաշտպանեցի իմ հայրենիքը:

Ոգոտոս 1937 թ.  
Յերևան

Փ Ա Ռ Ք Յ Ե Ր Կ Ր Ի Ն

1.

Փառք քեզ, յերկիր դու մայր,  
Ա՛րս, ինչպիսի յերգով  
Փառաբանեմ յես քեզ —  
Քո մարտերը հազար,  
Արագընթաց վազըդ —  
Պայծառ լույսի ներքո,  
Յերկիր, հարազատ հող  
Ու մայր դու անսասան:

2.

Թեև յերգն իմ թույլ ե,  
Յերկիր դու, բազմաուժ,  
Քո կառուցման թափի  
Ու քո աճի հանդեպ,  
Դու յես ծնել նրան,  
Տվել և՛ թափ, և՛ ուժ  
Յեզ լուսաբաց զվարթ,  
Վոր բացվել է արգեն:

3.

Ու յերկնքի ներքո,  
Ինչպես ծոփն անհուն,  
Ածուխ ուշ գիշերից  
Մինչև վառ լուսաբաց,  
Մեր սրտերում և մեր  
Հոգում ջինջ ջերմահուն,  
Սրսկեցիր լինել  
Զգոն ու աչքաբաց:

4.

Ով դու, յերկիր անհուն,  
Իմաստության փարոս,  
Մարմնացուճը հույզի,  
Մաքի, կամքի արեգ,  
Դու քայլում ես առաջ  
Ստալինյան ճամբով,  
Ո՛վ դու, խիզախության  
Ու փրկության արև:

5.

Իմ յերկիր համայն  
Ու արգավանդ հողեր,  
Յեզ պաշտոն ծառեր —  
Դեպի յերկինք հառնած,  
Դուք քամում եք վոսկե  
Արեգակից շողեր,  
Հզի որորվում եք —  
Բերրի, բերրի գարձած:

6.

Մեր հողերից քամած՝  
Ամբարներ են լցվել,  
Բերքը լույս քրտնքի—  
Աշխատանքի գնով,  
Կախան խաղողն ե մեր  
Արդեն վոսկեղոծվել,  
Դեմից ժպտում են մեզ  
Ուրախ նստով:

7.

Յերջանիկ ենք մենք այս,  
Պայծառ այս աշխարհում,  
Յերկիր, մենք մեր հողից  
Վոչ մի վերջոյ չենք տա  
Չար թշնամուն.  
Դու, անվրդով կյանք  
Ու բերկրանքի գարուն,  
Կամբացնենք դիրքերդ  
Բո անխորտակ:

8.

Կպաշտպանենք յիւած  
Արեւլքից մինչև,  
Ուր արեն ե վնջում  
Վառ շողերը իրա,  
Հետո հյուսիսից ցուրտ,  
Տաք հարավը մինչև,  
Արթուն քեզ կհոկենք  
Մահմաններիդ վրա:

9.

Ժողովուրդդ յեւած  
Վառ խոհերով լեցուն,  
Պայծառ կյանք ե կռում  
Ու լուսավոր մի բախտ,  
Փոթորիկում, հրում  
Յեվ թե ձմռանը ցուրտ,  
Ո՛վ բազմագգի յերկիր,  
Բո դաշինքով անխախտ:

10.

Յերկիր, ժողովուրդդ  
Թեև բազմագգի յե,  
Բայց ե ունեն իբար  
Միրելու հորդ ազբյուր,  
Յեվ բուրն ել յեւած  
Պաշտպանում են անգին  
Ղեկավարին մեր մեծ—  
Վառ ու հեղահամբույր:

11.

Նա վոր ունի կորով  
Յեվ հայրական վառ սեր,  
Նա վոր բերեց նոր կյանք—  
Խնդումնալից բարիք,  
Կպաշտպանենք նրան  
Այնքան ջերմ մի սիրով,  
Մեծաանուն պայծառ—  
Վառ հանձարին:

Յերկիր, յես ել ահա  
 Քո վորդին եմ ջահել,  
 Քո կաթովը եմ սնվել  
 Ու հույզերով անմար,  
 Իմ յերգերս առած,  
 Յեղ ձեռքով ջահեր,  
 Կպայքարեմ յես ել  
 Հաղթանակիդ համար:

Փնփն քեզ, յերկիր դու մայր,  
 Ախ, ինչպիսի յերգով  
 Փառարանեմ յես քեզ—  
 Քո մարտերը հազար,  
 Արագընթաց վազքդ—  
 Պայծառ լույսի ներքո,  
 Յերկիր, հարազատ հող  
 Ու մայր դու անսասան:

1936 թ.  
 Յերեան

Вся революционная Испания  
 чтит память комсомолки-ге-  
 роини Лины ОДЕНА, отваж-  
 ной помощницы Пасионарии.  
 Она погибла, попав в засаду  
 мятежников. Прекрасна и  
 мужественна была ее жизнь.  
 («Комсом. Правда».)

Այնտեղ զիրքեր են ու արյան հեղեղ,  
 Վոր հոսում է խոր խրամաաներում,  
 Արևն ել վերից բաշով վոսկեղեն,—  
 Իր հուրն եր վոեղ կապույտ յերկնքում:  
 Դիրքերի կողքին,—սրտովը արևոտ,  
 Ընկավ Ողենան, քաջ հերոսուհին,  
 Վառ ազատության մի պայծառ կարոտ  
 Նստել եր նրա հողու ծալքերին:

Բարկ արեն անա՛ մատներով իր ջերմ  
Մանրում ե նրա մազերը սե սաթ,—  
Թափում ե վերից վոսկեզոծ մի սեր  
Յեզ գիզում հսկա խնդուլթյան մի սար:  
Կարծես քնած ե, դեմքով վոսկեզույն  
Աղջիկը կըտրիճ աչքերով պայծառ,  
Կոմսոմոլկան այդ, իր մաքուր հոգում  
Պահած հաղթության հավատը անհար:

## 3.

Անարգված ու նենգ ֆաշիստ Ֆրանկոն  
Հնձել ե ուզում քաջ ժողովրդին—  
Այն Իսպանիայի, վոր հերոսաբար  
Յեղած կռվում են կամքով իրենց հուր:  
Ֆրանկոն, վարձկան հիալերյան շունը,  
Վոնց կարկտաբեր մուսյլված մի ամպ  
Ուզում ե ջնջել, կորցնել փոշում  
Մարդկության կերտած չքնաղ կուլտուրան:

## 4.

Ու աղատության կրակով արբած,  
Պասիոնարիայի դավակ Ողենան  
Ընկնելու պահին մեղմիկ շնջաց.  
— Ընկերներն իմ հաղթության վրան  
Կզարկեն աղնիվ Իսպանիայի վրա,  
Իմ քույրերն ու յեղբայրները դեռ  
Կ'գան, կ'ջնջեն կամքով անվարան,  
Փաշիստ իժերին ու Ֆրանկոյին նեռ:

Այն, Ողենա, քաղցր Ողենա,—  
Ընկար գնդակից թշնամու զազիր,  
Քո հիշատակը յերկար կ'Ֆնա  
Աղբյուրի պես ջինջ—սրտերում կարմիր:  
Յեզ մենք ել անա մեր կամքով հատու  
Քաջ Իսպանական ժողովրդի հեռ  
Մեր անարգանքի խոսքերն ենք նետում  
Վարձկան շներին այդ արյունահեղ:

1937 թ.

Յերեան

Յ Ե Ր Գ Ս Ա Վ Ա Ռ Ն Ա Կ Ի

Խորհրդային ավիացիայի որվան

1.

Առավոտն այս, վոր բացվում է խնդությամբ,  
Ինչպես մանկան զույգ աչիկները կապույտ,  
Իր մեջ ունի հաղթանակներ վառ, անամպ  
Ու ջերմ արև, վոր կամարն է իր կապում:  
Ահա յերած այս առավոտ—անհամար—  
Յերկաթաթև սավառնակներն են արի,  
Վորոնց հիմա մարզկային ուժն այս անմար  
Թև է տալիս ու մղում վեր ամպերից:

2.

—Դու սավառներ, դու սլացիր, դու ճախրիր—  
Քո թևերի ու քո սրտի մեջ ե, վոր  
Ստալինյան կամքը հզոր ու արի  
Քեզ հանում վեր խիզախությամբ փառավոր:  
Դեպի հյուսիսը սլացիր հեռավոր,  
Կտրիր, անցիր լայն ծովերը սառցապատ,  
Քեզ չեն հասնի արծիվները խոլապար,  
Հեքիաթալին Պեզասները թևավոր:

—Միշտ դեպի վեր, յերկաթաթև՝ իմ թռչուն,  
Քեզ թամբել են հերոսներն իմ յերկրի,  
Ահա նորից դեպի բեվեռ են թռչում  
Ստալինի դավակները քաջարի:  
Առավոտն այս, վոր բացվում է խնդությամբ,  
Ինչպես վարդը կարմրաթերթ ու կարմրաթուշ,  
Սավառնում են արծիվները յերկաթյա—  
Ու հնչում է նրանց չերգը քաղցրանուշ:

1937 թ.

Յերևան

\*  
\* \*

Միրելի Վախյայից

1.

Կապուտաչ աղջիկն այս մեծանում ե  
Յեվ չունի իր սրտում վոչ մի թախիծ,  
Ահա նա ժպտում ու խաղում ե  
Յեվ առում ե կարծես՝ «նայե՛ք ինձ»:

2.

Մեծացիր դու, բալիկ իմ, մեծացիր,  
Ստալինյան այս պայծառ արևի տակ.  
Մեծացիր, և դու լավ իմացիր, վոր  
Պիա լինես մի գինվոր մարտունակ:

1936 թ.  
Արարատ

Վ. Ա. Ր. Ը

1.

Դաշտերը սեցան, գարունը բացվեց,  
Սիրտս ել հենց այդ ե շնջում՝ նա ինձ,  
Լեռան պտուղից իր շողը զարկեց,  
Արևը կիզուն վողջունից նորից:  
Վորպես հասուն նուռ արևը կախվեց  
Կապույտ յերկնքից, շաղ տալով իրա  
Նուռ հատիկի պես շողերը, ցրեց  
Լեռների ու մեր դաշտերի վրա:

2.

Իսկ հերկվորները յելան լիասիրտ՝  
Հերկելու հողը: Ահա թերթում են,  
Գրոհում են նրանք՝ ձուլված միասին,  
Իսկ սեահողը լուռ սրսրաում ե:  
Խոփը խրվում ե, ինչպես զանակը  
Սև թխված հացի սիրտը կիսելուց,  
Հողը պատում ե այդ կուռ բանակը,  
Վոսկեհատիկը այնտեղ պահ տալու:

1935 թ.  
Յերևան



Ջ Ո Ւ Ր Ը

1.

Կապույտ յերակների նման փռված,  
Ջուրը հոսում է յերկրիս գաղտերով,  
Վոր ջրի կրկին նա մեր ցանած  
Հատիկներըն այն՝ հողում սլառկած,  
Վոր նրանք աճեն, դառնան բերրի,  
Լցվեն խրճիթներ, լցվեն տներ,  
Չե՞ վոր թանգ է նա՝ քան թե վոսկին,  
Վոր փայփայեց կոշտ ձեռքերը մեր:

2.

Ո՛ր ջուր, հասից դու, ո՛ր ջուր, զնա,  
Արծաթ ստինքդ դիր հասկի շուրթին,  
Վոր ձձի նա ու կուշտ հազենա,  
Ինչպես յերեխան մորը գրկին:  
Չե՞ վոր նա էլ է փոքրիկ մանուկ,  
Նրան էլ պետք է լավ խնամել,  
Վոր ըարձրանա նա, մենք անհամար  
Լիություն պետք է նրանից քամենք:

1935 թ.

Յերեան

Պ Ա Ր Տ Ի Չ Ա Ն Ո Ւ Հ Ի Ն

(Թալլադ)

1.

Գիշեր է մառ խավար,  
Ու խավարի միջից  
Ընթանում է դեպ վար  
Ահա մի ձի:  
Յե՛վ այդ ձիուն նստած  
Մի պարտիզան ազջիկ  
Սլանում էր սառած  
Գետի աջից:

Յե՛վ նա լուր էր տանում  
Իրենց վաշտի մասին,  
Իր հետևում թողած  
Յե՛վ մարտ, կ' սվին:

2.

—Իսկ դու սլանում ես՝  
Ամուր կպած թամբից,  
Գուցե նրանց փրկես  
Գնդակներից:

\* \*

Բայց նա տեղ չհասած  
Ընկավ գետի ափին,  
Յեղ մի սուր ցավ զգաց,  
Մնաց հողին:

Ձին ել մնաց կողքին,  
Ձհեռացավ յիրենք,  
Իսկ աղջիկը կարծես  
Կլանքը թեքեց:

Նա յերբ ուշքի յեկավ՝  
—Ո՛ր, սպիտակ լժ ձի,  
Ի՞նչ ես մնացել այտեղ—  
Կընկնես հնձից:  
Ձին խրխնջաց—ասաց.  
—Կհեռանամ, բայց չես  
Հետո թամբիս առած  
Կտանեմ քեզ:

3.

Ձեր անցել յերկար,  
Ձին բերեց իր հեռ  
Յերկու կտրիճներ,—  
Յերկու անեղ մարդ:  
Շունչը չեր փչել  
Կտրիճ աղջիկը,  
Նա ըարձրացավ վեր  
Ու լուռ շշնջաց.

—Աչնտեղ մերոնք են  
Մեռնում գնդակից—  
Ո՛ր, հասեք նրանց,  
Ազատեք մահից:  
—Յես ընկա այտեղ,  
Բայց վոչինչ, վոչինչ—  
Մերոնք թշնամուն  
Կանեն ընալինջ:

1935 թ.

Հոկտեմբերյան

Խ Ո Ս Ք

Մայր յերկիր, հողում քո այնքան բերրի  
 Յերգեր են ծաղկել բերքերով առատ,—  
 Իմ կանաչ յերգն ել քեզ նվեր բերի,  
 Սնիր դու նրան քո կաթով պայծառ:  
 Բողբոջ ե յերգն իմ ու կարոտ այնքան  
 Մայր գուրգուրանքի—հարազատ խոսքի,—  
 Բողբոջն այդ արգեն առնում ե նոր կյանք,  
 Ստալինյան ջերմ արևով վոսկի:

1937 թ  
 Յերևան



ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՑՈՒՆ

1. Հայրենիք իմ լուսեղեն . . . . .	7
2. Յերգ խորհրդային հայրենասիրության . . . . .	10
3. Յերգ առաջնորդի մասին . . . . .	13
4. Մեծ մարզը . . . . .	14
5. Մեր յերկրի աղջիկները . . . . .	17
6. Ո՛ր, վոսկեմնյա իմ աշուն . . . . .	19
7. Մանուկներին . . . . .	20
8. Մ ա յ ր ը . . . . .	21
9. Հ ու ն ձ ը . . . . .	23
10. Յերգ արևի ու գարնան մասին . . . . .	25
11. Պուշկինյան դիշեր . . . . .	27
12. Կարա-Թափա . . . . .	29
13. Յես պաշտպանեցի իմ հայրենիքը . . . . .	42
14. Փառք յերկրին . . . . .	50
15. Ո դ ե ն ա . . . . .	55
16. Յերգ սովառնակի . . . . .	58
17. Սիրելի Վախագային . . . . .	60
18. Վ ա ը ը . . . . .	16
19. Զ ու ը ը . . . . .	62
20. Խ ո ս ք . . . . .	66

024

Խմբագիր՝ Վ. Հաբուսյան  
Տեխ. խմբագիր՝ Ա. Ն. Փասպարյան  
Պրեպարենտ՝ Թ. Հովակիմյան  
Գոնորոլ սրբագրեն՝ Վ. Ավագյան

Գլխավոր լրագոր Ա.—3060. Հրատ. 4368. Պատվ. 1286. Տիրած 2000  
Թուղթ 72×110 տպագրական 21/8 մամ.  
Մեկ մամուլում 51,200 նիջ. Հեղինակային 23/4 մամ.  
Հանձնված է արտադրության 2 դեկտեմբերի 1937 թ.  
Ստորագրված է տպագրության 5 հունվարի 1938 թ.  
ՓԻՆԸ 2 Թ.

Պետհրատի տպարան, Յերեան, Լենինի փող. 65



ԳԻՆԻ 2 Ա.

108

21620

В. АРАМУНИ  
**Зеленые песни**  
Гив Арм. ССР, Ереван, 1938 г.